



## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

### **1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

1.1. Դատական քննությանը մասնակցելն ամբաստանյալի հիմնական դատավարական իրավունքներից է, որով ապահովվում է նաև մի շարք այլ դատավարական իրավունքների իրականացումը, օրինակ՝ պաշտպանության իրավունքը, իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքը, ճառով հանդես գալու իրավունքը, վերջին խոսքի իրավունքը և այլն: Ամբաստանյալի դատական քննությանը մասնակցելու իրավունքն ունի սահմանադրական և միջազգային իրավական հիմնավորումներ, քանի որ այն դատական պաշտպանության հիմնական իրավունքի կարևոր երաշխիքներից է:

Այսպես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» (16.12.1996թ.) միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» ենթակետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ, լիակատար հավասարության հիման վրա, ի թիվս այլ նվազագույն երաշխիքների՝ իրավունք ունի դատվել իր ներկայությամբ և իրեն պաշտպանել անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածում դատական քննությանն անձամբ ներկա գտնվելու իրավունքի մասին թեև բացակայում է



առանձին նշում, սակայն դրանում նախատեսված՝ մեղադրյալի մի շարք նվազագույն իրավունքների իրացումը գործնականում հնարավոր է դատական քննությանը մեղադրյալի փաստացի ներկայության դեպքում: Սակայն մեղադրյալի դատական քննությանը մասնակցելու իրավունքը չի կրում բացարձակ բնույթ և կարող է սահմանափակվել: Բացի այդ, քանի որ գործի դատական քննությանը ամբաստանյալի ներկայության բացարձակ պարտադիրությունը օբյեկտիվորեն կապված է քրեական գործերի քննության «անհարկի հապաղումների» և տուժողների արդարադատության մատչելիության իրավունքի հետ, միջազգային իրավական փաստաթղթերը հնարավոր են համարում նաև մեղադրյալի (ամբաստանյալի) բացակայությամբ դատական վարույթը: Քննարկվող ինստիտուտի ներդրման իրավաչափությունը նախատեսված է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Ամբաստանյալի բացակայությամբ վարույթը կարգավորող չափանիշների մասին» 1973 թ. հունվարի 19-ի 75 (11) բանաձևում և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Քրեական արդարադատության պարզեցման վերաբերյալ» 1987թ.-ի սեպտեմբերի 17-ի N R (87) 18 հանձնարարականում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է, որ քրեական հետապնդման վիճակում գտնվող անձի բացակայության պայմաններում դատաքննության իրականացման անհնարինությունը կարող է կաթվածահար անել քրեական վարույթը, հանգեցնել ձեռք բերված ապացույցների տարածման, քրեական հետապնդման ժամկետների սպառման և արդարադատության ձախողման:<sup>1</sup> Հենց այս պատճառով էլ, դատարանը համարում է, որ *in absentia* դատավարությունը, որպես այդպիսին, չի հակասում արդար դատաքննության իրավունքին: Այնուամենայնիվ, երբ ներպետական իրավունքը թույլ է տալիս *in absentia* դատավճռի կայացումը, դատավճռի մասին իմանալով՝ անձը պետք է հնարավորություն ունենա իրեն մեղսագրված արարքի հիմքերի վերաբերյալ որոշակի տվյալներ ստանալ (*Sanader v. Croatia*, no. 66408/12, 12 February 2015, §§ 77-78):

<sup>1</sup> *Colozza v. Italy*, 12 February 1985, Series A no. 89, § 29:



Տարբերակված վարույթի այս տեսակը բավականին տարածված է Եվրոպայի խորհրդի մի շարք երկրներում: Հանձնման մասին կոնվենցիայի 2-րդ լրացուցիչ արձանագրությունը վավերացրած 41 երկրներից «հեռակա դատաքննություն» և այդ կարգով դատավճռի կայացման հնարավորություն նախատեսվում է 22 երկրներում, ներառյալ, *Ֆրանսիա, Բելգիա, Խորվաթիա, Չեխիա և մի շարք այլ երկրներ:*

*Այս երկրներից շատերում հեռակա կարգով կայացվող դատավճիռները արդեն իսկ կայուն դատական պրակտիկա են ձևավորել, ինչպես նաև տարբեր գործերի շրջանակներում գնահատման արժանացել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:*

#### Այլ պեպուսությունների օրենսդրություն

##### *Բելգիայի Թագավորություն*

Բելգիական քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ դատավճիռը համարվում է *in absentia* կայացված, եթե ծանուցված անձը կամ նրա պաշտպանը չեն ներկայանում դատավարությանը ծանուցման մեջ նշված օրը և ժամին:<sup>2</sup> Այսինքն, բոլոր այն դեպքերում, երբ քրեական հետապնդման մեջ գտնվող անձին դատաքննության ընթացքում ներկայացնում է նրա պաշտպանը, արդյունքում կայացված դատավճիռը համարվում է մրցակցային դատավարության արդյունքում կայացված, ոչ թե *in absentia*: Հետևաբար, բոլոր այն դեպքերում, երբ պաշտպանը մասնակցել է դատաքննությանը և բացակայության պայմաններում վարույթն այդ կերպ է ընթացել, արդյունքում կայացված դատավճիռը վերանայման ռեժիմով չի անցնում, այլ կարող է ընդհանուր հիմունքներով բողոքարկվել վերաքննության կարգով, քանի որ վերանայման միջնորդությունը կարող է ներկայացվել միայն *in absentia* դատավճիռների դեպքում, դրանց մասին իմանալուց 15-օրյա ժամկետում:<sup>3</sup>

##### *Ֆրանսիայի Հանրապետություն*

<sup>2</sup> Բելգիայի Թագավորության քրեական դատավարության օրենսգիրք, 1878-04-17/01, 05.05.1878թ., հոդված 186, հասանելի՝ [այստեղ](#):

<sup>3</sup> *Ibid* 8, հոդված 187 մաս 1



Ֆրանսիական օրենսդրությունը տարբերակում է բացակայությամբ վարույթների մի քանի տեսակներ, որոնց կիրառումը պայմանավորված է քննության ընթացքում մեղադրյալի դրսևորած վարքագծով: Նախ, Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ մեղադրյալի պարբերաբար պատշաճ ծանուցված լինելու դեպքում վերջինիս չներկայանալը հանգեցնում է իր բացակայությամբ գործի քննությանը, որի արդյունքում կայացված դատավճիռը համարվում է մրցակցային դատավարությամբ կայացված, սակայն դատարանը պարտականություն է կրում դատավճռի մասին պարտադիր ծանուցել դատապարտված անձին, որից սկսած էլ հոսելու են բողոքարկման ժամկետները (*jugement contradictoire à signifier*): Այս դեպքում փաստաբանը ամեն դեպքում պետք է լսված լինի, եթե ներկայանում է դատական նիստին:<sup>4</sup> Նման կարգով կայացված դատավճիռը ենթակա չէ վերանայման, այլ կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով:

Քննարկվող *in absentia* դատավճիռ կարող է կայացվել այն դեպքում, երբ մեղադրյալին ծանուցել հնարավոր չի լինում և հաստատվում է, որ նա այդ ծանուցման մասին տեղյակ չէ և չի ներկայանում դատարան, բացառությամբ այն դեպքերի, երբ մեղադրյալն ինքն է միջնորդել, որպեսզի դատաքննությունը տեղի ունենա իր բացակայության պայմաններում:<sup>5</sup>

Այսպիսով, մեղադրյալի՝ պարբերաբար չներկայանալու դեպքում նրա նկատմամբ դատաքննությունը և դատավճիռը կայացվում է *in absentia*:<sup>6</sup> Այս դեպքում արդեն քրեական հետապնդման ենթարկվող անձի կողմից համապատասխան առարկություն ներկայացնելու դեպքում դատավճիռը ճանաչվում է անվավեր ամբողջ ծավալով և գործը ենթակա է վերանայման: Միննույն ժամանակ, առարկությունը կարող է ներկայացվել միայն դատավճռով լուծված քաղաքացիական հայցի մասով:<sup>7</sup>

<sup>4</sup> Ֆրանսիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, 08.04.1958թ., հոդված 410

<sup>5</sup> *Ibid* 10, հոդված 412

<sup>6</sup> *Ibid* 10, հոդված 487

<sup>7</sup> *Ibid* 10, հոդված 489



***In absentia* դատավճռի դեմ առարկության բացակայության դեպքում դատավճռով բռնագանձման ենթակա գույքը պետության սեփականությունն է դառնում մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետը լրանալուց հետո:**<sup>8</sup>

Օրենսգիրքը սահմանում է նաև այն դեպքը, երբ առարկություն ներկայացնելուց հետո անձը կրկին չի ներկայանում նիստին: Այս դեպքում նրա ներկայացրած առարկությունն անվավեր է ճանաչվում:<sup>9</sup>

#### *Ռուսաստանի Դաշնություն*

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսում է, որ բացառիկ դեպքերում ծանր և առանձնապես ծանր հանցագործության վերաբերյալ գործերով դատական քննությունը կարող է անցկացվել ամբաստանյալի բացակայությամբ, որը գտնվում է ՌԴ տարածքից դուրս և (կամ) խուսափում է դատարան ներկայանալուց, եթե այդ անձն այլ պետության տարածքում այդ գործով չի ենթարկվել քրեական պատասխանատվության:

#### *Վրաստանի Հանրապետություն*

Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը «հեռակա դատաքննություն» անցկացնելու միակ հիմք սահմանում է դատարան ներկայանալուց քրեական հետապնդման ենթարկվող անձի խուսափելը: Ընդ որում, նման տարբերակված վարույթով դատաքննության դեպքում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:<sup>10</sup>

Վրացական օրենսդրությունը չի սահմանում վերանայումը նույն ատյանի կողմից, այլ հնարավորություն է տալիս բողոքարկել *in absentia* դատավճիռները միայն վերաքննության կարգով:<sup>11</sup> Ըստ էության, նման մոտեցումը որոշակիորեն կարելի է համադրելի համարել բելգիական կարգավորման հետ այնքանով, որքանով Բելգիայում պաշտպանի մասնակցությունը պարտադիր չէ, իսկ նրա մասնակցությամբ վարույթի

<sup>8</sup> *Ibid* 10, հոդված 493-1

<sup>9</sup> *Ibid* 10, հոդված 494

<sup>10</sup> Վրաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, թիվ 1772, 09.10.2009թ., հոդված 189 մաս 1, հասանելի՝ [այստեղ](#):

<sup>11</sup> *Ibid* 10, հոդված 292 մաս



արդյունքում կայացված դատավճիռը չի համարվում *in absentia*: Այս մոդելի համատեքստում վրացական տարբերակված վարույթը չէր էլ համարվի *in absentia*:

### *Խորվաթիայի Հանրապետություն*

Խորվաթիայի քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ անձի նկատմամբ հեռակա դատաքննությունը հնարավոր է միայն իր գործի քննության համար հատուկ կարևորության դեպքերում և սպառիչ կերպով թվարկում դրանք. 1) այլ պետության տարածքում դատական քննության անհնարինությունը, 2) հանձնման անհնարինությունը, 3) մեղադրյալի փախուստը:<sup>12</sup> Հեռակա դատաքննություն անցկացնելու որոշումը կայացնում է դատարանը, սակայն միայն մեղադրող դատախազի միջնորդության հիման վրա: Ընդ որում, օրենքը սահմանում է նաև, որ հեռակա դատաքննություն իրականացնելու որոշման գործողությունը կասեցվում է, եթե դա տեղի է ունեցել հակառակ մեղադրողի դիրքորոշման:<sup>13</sup>

Խորվաթական քրեադատավարական օրենսդրությունը բացակայությամբ վարույթների այլ հնարավորություններ նույնպես սահմանում է:

Որպես ընդհանուր կանոն, մեղադրյալի մասնակցությունը դատական նիստերին պարտադիր է, իսկ նրա չներկայանալու դեպքում դատարանը որոշում է կայացնում մեղադրյալին բերման ենթարկելու մասին:<sup>14</sup> Այդուհանդերձ, դատական նիստին մեղադրյալի չներկայանալու հետևանքով նիստի հետաձգման պայմանների առկայության դեպքում կամ նրա պաշտպանի բացակայության դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել դատական նիստը կայացնելու մասին, եթե գործի քննությամբ ձեռք բերված ապացույցներն ակնհայտորեն վկայում են արդարացման դատավճռի կայացման մասին:<sup>15</sup> Դատական նիստը կարող է անցկացվել առանց

<sup>12</sup> Խորվաթիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, թիվ 2386, 28.10.2011թ., հոդված 402 մաս 3, հասանելի՝ [այստեղ](#):

<sup>13</sup> *Ibid* 12, հոդված 402 մաս 4

<sup>14</sup> *Ibid* 12, հոդված 402 մաս 1

<sup>15</sup> *Ibid* 12, հոդված 404 մաս 1



մեղադրյալի նաև այն դեպքում, երբ մեղադրյալն ինքն է իրեն այնպիսի վիճակի մեջ դնում, որն անհնարին է դարձնում իր մասնակցությունը նիստին:<sup>1617</sup>

Հեռակա դատաքննություն կարող է իրականացվել նաև այն դեպքում, երբ պատշաճ ծանուցված մեղադրյալը չի ներկայանում դատական նիստին կամ ծանուցագրի հանձնումն անհնարին է՝ վերջինիս կողմից առանց դատարանին տեղեկացնելու հասցեն փոխելու հետևանքով, կամ մեղադրյալն ակնհայտորեն խուսափում է ծանուցագիրը ստանալուց: Նշված դեպքերում հեռակա դատաքննություն իրականացնելու մասին որոշման համար անհրաժեշտ է երեք պայմանների միաժամանակյա առկայություն. 1) դատական քննությունը տեղի է ունենում այնպիսի հանցագործության մեղադրանքով, որի համար պատիժը չի գերազանցում 12 տարի ժամկետով ազատազրկումը, 2) մեղադրյալը նախապես ծանուցվել է հեռակա դատաքննության կարգով իր նկատմամբ դատավճռի կայացման հնարավորության մասին, ինչպես նաև 3) մեղադրյալը պաշտպանի ներկայությամբ արտահայտել է իր դիրքորոշումը մեղադրական եզրակացության վերաբերյալ:<sup>18</sup>

Նախորդ երկու դեպքերում պաշտպանի մասնակցությունը պարտադիր է:

«Անչափահասների գործերով դատարանների մասին» օրենքի համաձայն՝ «անչափահասների նկատմամբ *in absentia* դատաքննություն չի կարող իրականացվել»:<sup>19</sup>

#### *Չեխիայի Հանրապետություն*

Չեխական օրենսդրությունը հեռակա դատաքննության հնարավորություն թույլ է տալիս մեղադրյալի փախուստի դեպքում: Այդ դեպքում դատարանն առանձին որոշում է ընդունում հեռակա դատաքննություն անցկացնելու մասին և այդ կարգով էլ դատավճիռ կայացնում՝ միաժամանակ շարունակելով հրապարակել նիստին ներկայանալու վերաբերյալ ծանուցագրերը:

<sup>16</sup> Հողվածում նշվում է, որ որոշումը կայացվում է բժիշկ-փորձագետի կողմից զննության ենթարկվելուց հետո, ինչից հետևում է, որ խոսքը հիմնականում առողջական վիճակի մասին է (օրինակ՝ ինքնավնասում):

<sup>17</sup> *Ibid* 12, հոդված 404 մաս 2

<sup>18</sup> *Ibid* 12, հոդված 404 մաս 3

<sup>19</sup> «Անչափահասների գործերով դատարանների մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք, թիվ 1792, 20.07.2011թ., հոդված 53 մաս 1, հասանելի՝ [այստեղ](#):



Ամբաստանյալի բացակայությամբ դատական քննությունը կարող է տեղի ունենալ, եթե դատարանը գտնի, որ գործի հավաստի քննությունը և քրեական դատավարության նպատակներին հասնելը կարող են տեղի ունենալ առանց նրա մասնակցության: Միաժամանակ անհրաժեշտ է, որ մեղադրական եզրակացությունը պատշաճ մինչ այդ հանձնված լինի մեղադրյալին, նա ծանուցված լինի նիստի մասին, ինչպես նաև մինչդատական վարույթի ընթացքում լսված լինի առաջադրված մեղադրանքի շուրջ, բացատրված լինեն գործի նյութերին ծանոթանալու և միջնորդություններ ներկայացնելու իրավունքները:<sup>20</sup>

Հիմնական դատական լուսմները չեն կարող տեղի ունենալ ամբաստանյալի բացակայությամբ, եթե վերջինս գտնվում է կալանքի տակ, պատիժ է կրում ազատագրկման ձևով կամ մեղսագրվող հանցագործության համար սահմանված պատիժը գերազանցում է 5 տարի ժամկետով ազատագրկումը:<sup>21</sup>

Նախորդ պարբերությամբ նշված սահմանափակումը չի գործում այն դեպքերում, երբ ամբաստանյալն ինքն է պահանջում, որ իր նկատմամբ իրականացվի *in absentia* դատաքննություն:<sup>22</sup> Այս կարգով կայացված մեղադրական դատավճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով և նույն ատյանի կողմից վերանայման ենթակա չէ:

Քրեական դատավարության օրենսգրքի առանձին կարգավորումների հետ մեկտեղ տարբերակված այս վարույթի առանձնահատկությունները սահմանվում են նաև հատուկ վարույթների շարքում «Դատական քննությունը փախուստի դիմած անձի նկատմամբ» վերտառությամբ գլխում: Ի թիվս այլ կարգավորումների, այստեղ ուղղակիորեն նշվում է, որ փախուստի մեջ գտնվող անձի նկատմամբ *in absentia* մեղադրական դատավճիռը

<sup>20</sup> Չեխիայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, 141/1961, 09.12.1961թ., հոդված 202 մաս 2, հասանելի՝ [այստեղ](#):

<sup>21</sup> *Ibid* 26, մաս 4

<sup>22</sup> *Ibid* 26, մաս 5





պարտադիր ենթակա է վերանայման, եթե անձը դրա կատարումից<sup>23</sup> 8-օրյա ժամկետում առարկություն է ներկայացնում դատավճռի նկատմամբ:<sup>24</sup>

Փախուստի մեջ գտնվող և հեռակա դատաքննությամբ դատապարտվող անձի շահերի պաշտպանության համար պարտադիր ներգրավվում է պաշտպան, ով օժտված է նույն իրավունքներով, ինչ ամբաստանյալը:<sup>25</sup>

Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) նախատեսված չէ մեղադրյալի՝ քննությունից կամ դատից խուսափելու դեպքում հեռակա դատական քննություն իրականացնելու հնարավորություն:

Օրենսգրքի 302-րդ հոդվածի (ամբաստանյալի մասնակցությունը դատական քննությանը) համաձայն՝ դատական քննությունը կատարվում է ամբաստանյալի մասնակցությամբ, որի դատարան ներկայանալը պարտադիր է, բացառությամբ Օրենսգրքի 314.2-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի: Օրենսգրքի 314.2-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքն առնչվում է դատական նիստերի դահլիճից հեռացում դատական սանկցիա կիրառելուն: Նշված դեպքից բացի այլ իրավիճակներում Օրենսգիրքն ամբաստանյալի մասնակցությունը դատական քննությանը համարում է պարտադիր, իսկ վերջինիս՝ դատական քննությանը չներկայանալը՝ որպես գործի քննության բացառիկ արգելք, որը հիմք է դառնում դատական նիստի հետաձգման, ընդհուպ մինչև գործի վարույթն անորոշ ժամկետով կասեցնելու: Այսպիսի մոտեցման նախատեսումն այն իրավիճակներում, երբ քրեական վարույթին մասնակցելու մեղադրյալի իրավունքը պետության կողմից անվերապահորեն ապահովվում է, սակայն վերջինս հրաժարվում է իր այդ սուբյեկտիվ իրավունքից, արդարացված չէ հանրային շահի ապահովման տեսանկյունից: Դատական քննությանը մեղադրյալի (ամբաստանյալի) պարտադիր մասնակցության իրավաչափ նպատակը սպառվում է,

<sup>23</sup> Այսինքն, մեղադրական դատավճռի հիման վրա անձին արգելանքի վերցնելու պահից, եթե նշանակվել է պատիժ՝ ազատազրկման ձևով: Կամ դատավճռով փախուստի դիմած անձի նկատմամբ տրամաբանական է, որ դատավճռով արգելանքի միջոցներ սահմանվեն՝ անկախ պատժից:

<sup>24</sup> *Ibid* 26, հոդված 306a մաս 2

<sup>25</sup> *Ibid* 26, հոդված 304



երբ վերջինս, տեղյակ լինելով իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին, խուսափում կամ թաքնվում է քննությունից՝ հրաժարվելով քրեական վարույթին իր անմիջական մասնակցության հնարավորությունից: Քրեական վարույթին անմիջական մասնակցության հնարավորությունից մեղադրյալի հրաժարումն իր փաստական կազմով նույնանում է առանձին դատավարական իրավունքներից հրաժարվելու փաստակազմին: Հետևաբար, եթե մեղադրյալը (ամբաստանյալը) հրաժարվում է գործի քննությանը մասնակցելու իր իրավունքից, ապա անուղղակիորեն հրաժարվում է նաև մի շարք այլ դատավարական իրավունքներից, օրինակ՝ հակընդդեմ հարցման իրավունքից կամ ցուցմունք տալու իրավունքից և այլն: Ուստի մեղադրյալի (ամբաստանյալի կողմից) իր այդ իրավունքների իրացումից սեփական կամքով կամ հակաիրավական արարք կատարելով (forfeiture by wrongdoing) հրաժարումը չի կարող մեկնաբանվել հօգուտ վերջինիս՝ հիմք դառնալով քրեական վարույթի հետագա ընթացքը դադարեցնելու համար: Քննարկվող իրավունքների սուբյեկտիվ կրողը մեղադրյալն (ամբաստանյալ) է և ինքը պետք է կրի այդ իրավունքներից հրաժարվելու բացասական հետևանքները:

**1.2.1.** «Բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի համաձայն՝ «Բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ»:

Բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունը բանկային համակարգի արդյունավետ գործունեության, ֆինանսական համակարգի



կայունության և բանկային գործառնություններից օգտվող անձանց մասնավոր շահերի պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկն է: Սրա հիման վրա բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության իրավական կանոնակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի դրա երաշխավորման պահանջից ցանկացած կամայական նահանջ: Այս առումով պետք է նշել, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պետական մարմիններին և պաշտոնատար անձանց կարող են տրամադրվել միայն այն սահմաններում և միայն այն չափով, որքանով դա անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված նպատակների, այդ թվում՝ հանրային շահի ապահովման համար՝ պայմանով, որ նախատեսված են մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գործուն երաշխիքներ:

Նշվածի համատեքստում պետք է ընդգծել, որ քրեական վարույթի շրջանակներում բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանության և բացահայտման հարցը սերտորեն առնչվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման քրեական դատավարության հիմնաքարային խնդրին: Այս տեսանկյունից կարևոր է նշել, որ սահմանադրորեն պաշտպանվող շահերի հավասարակշռությունը քրեական դատավարության ոլորտում ենթադրում է հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ և արդարացի հավասարակշռության ապահովում, մասնավորապես՝ մի կողմից՝ քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանության, մյուս կողմից՝ վարույթն իրականացնող մարմինների գործառնությունների արդյունավետ իրականացման ապահովում, ինչպես նաև քրեական դատավարության առանձին մասնակիցների և տուժողի՝ սահմանադրորեն պաշտպանվող իրավունքների և օրինական շահերի հավասարակշռում:

Նշվածից ուղղակիորեն բխում է, որ բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության իրավական ռեժիմը սահմանելիս օրենսդիրը պետք է սահմանի այնպիսի կառուցակարգեր, որոնք մի կողմից կապահովեն նշված տեղեկությունների բարձր պաշտպանվածությունը հանցագործությունների կանխման,



խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում, բայցև մյուս կողմից չեն ստեղծի անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների բացահայտման նպատակով դրանց օգտագործման համար: Քննարկվող դեպքում հանրային և մասնավոր շահերի բալանսավորումը կարևոր է՝ հաշվի առնելով նաև, որ բանկային գաղտնիքի պահպանումը բխում է ոչ միայն մասնավոր, այլ նաև հանրային շահից՝ նկատի ունենալով բանկային գաղտնիքի կարևորությունը ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից:

1.2.2. Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ ծառայողական տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա»:

Օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «(...) Բանկային, նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար խուզարկությունը կամ առգրավումը կատարվում է դատարանի որոշման հիման վրա»:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան: (...)»

Օրենսգրքում և Օրենքում ամրագրված վերոշարադրյալ դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա կարող է ձեռք բերվել բացառապես ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ բանկային գաղտնիքը: Այլ խոսքով՝ անձի



վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը կարող է տրամադրվել քրեական վարույթն իրականացնող մարմնին, եթե՝

**ա) անձը ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ,**

**բ) առկա է բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման նպատակով խուզարկություն կամ առգրավում կատարելու թույլտվություն տալու վերաբերյալ դատարանի որոշումը:**

**1.2.3.** Նախորդ կետում մեջբերված իրավակարգավորումները դիտարկելով հիմնավորման 1.2.1 կետում կատարված իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ կարծում ենք, որ Օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասից, Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասից բխող և իր բնույթով բացարձակ նորմատիվ պարտադրանքն առ այն, որ կոնկրետ քրեական գործի շրջանակներում մինչդատական վարույթն իրականացնող մարմինը դատարանի որոշման հիման վրա կարող է ստանալ միայն բանկի այն հաճախորդի բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունները, որը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ, խախտում է քրեական դատավարության ոլորտում հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ և արդարացի հավասարակշռությունը, քանի որ ստեղծում է անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում:

**1.2.4.** Հաշվի առնելով բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման սուբյեկտային սահմանափակման պահանջը վերացնելու օբյեկտիվ անհրաժեշտությունը և միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1546 որոշմամբ արտահայտած նկատառումները, որով Սահմանադրական դատարանն անդրադարձել է քրեական վարույթի շրջանակներում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության հիմնական իրավունքով պաշտպանվող՝ բանկային գաղտնիք կազմող և այլ գաղտնի տեղեկություններ ստանալու և



մինչդատական վարույթում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման իրավաչափությունն ստուգելու առանձնահատկություններին՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծերի փաթեթը (այսուհետ՝ նաև Նախագծերի փաթեթ), որով, ի թիվս այլնի, որոշակիացվել է քրեական վարույթում կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձանց շրջանակը, որոնց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել՝ հետապնդելով **իրավաչափ նպատակ**: Մասնավորապես, Նախագծերի փաթեթով առաջարկվում է բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալ հետևյալ սուբյեկտների մասով.

1) կասկածյալ.

2) մեղադրյալ.

3) այն ֆիզիկական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նրա և 1-2-րդ կետերով նշված անձի միջև առկա է անմիջական կապ, և նրա վերաբերյալ այդ տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են 1-2-րդ կետերով նշված անձին վերագրվող արարքին (*նոր սուբյեկտ*).

4) այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է 1-2-րդ կետերով նշված անձի կողմից, և դրա վերաբերյալ այդ տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են 1-2-րդ կետերով նշված անձին վերագրվող արարքին (*նոր սուբյեկտ*):

Անդրադառնալով առաջարկվող նոր սուբյեկտներին՝ հարկ է ընդգծել, որ վերջիններիս պարագայում պետք է հիմնավորվեն հետևյալ կարևոր հանգամանքները.

**1) հիմնավոր ենթադրության մակարդակում պետք է հաստատվի, որ առկա է անմիջական կապ 1-2-րդ կետերով նշված անձի և ֆիզիկական այլ անձի միջև, և**



միաժամանակ վերջինիս բանկային կամ հարակից գաղտնիք կազմող տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են 1-2-րդ կետերով նշված անձին վերագրվող արարքին.

2) հիմնավոր ենթադրության մակարդակում պետք է հաստատվի, որ իրավաբանական անձի գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է 1-2-րդ կետերով նշված անձի կողմից և միաժամանակ դրա բանկային կամ հարակից գաղտնիք կազմող տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են 1-2-րդ կետերով նշված անձին վերագրվող արարքին:

Առաջարկով ըստ էության իրացվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0223/07/14 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, որով ստեղծվել է համապատասխան մեխանիզմ, ինչը թույլ կտա համապատասխան տեղեկություններ ստանալ նաև այն իրավաբանական անձի վերաբերյալ, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ նոր սուբյեկտները քրեական դատավարությունում օժտված չեն կարգավիճակով և չեն օգտվում դատավարական կարգավիճակ ունեցող անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության օրենսդրական կառուցակարգերից, Նախագծերի փաթեթում ամրագրվել են որոշակի ու հստակ երաշխիքներ և կառուցակարգեր, որոնք միտված են անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա դնել անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանվածությունը չհիմնավորված միջամտությունից՝ զուգահեռաբար չստեղծելով անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների կանխման, խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում՝ ապահովելով հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ և արդարացի հավասարակշռությունը:



Մասնավորապես, քրեական գործերով վերոնշյալ անձանց վերաբերյալ բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանվածությունն ապահովելու համար Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել հետևյալ ամուր երաշխիքները՝

ա) Բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկություններն ստանալու միջնորդության բավարարման դեպքում դատարանը **պետք է կայացնի պատճառաբանված որոշում**.

բ) **Նշված անձինք, չհանդիսանալով դատավարության մասնակից, Օրենսգրքի 262-րդ և 265-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում հնարավորություն են ունենալու ծանոթանալ իրենց վերաբերյալ հավաքված տեղեկություններին**: Քննիչը պարտավորվելու է նրանց գրավոր հայտնել այդպիսի տեղեկություններ պարունակող գործի նյութերին ծանոթանալու ժամանակը և տեղը, բացառությամբ, երբ դրանց կապակցությամբ նոր քրեական գործ է հարուցվել.

գ) «բ.» կետով նախատեսված իրավունքի իրացման դեպքում **դատավարության մասնակից չհանդիսացող անձինք, եթե գտնում են, որ տվյալների ձեռքբերման շրջանակներում տեղի է ունեցել իրենց իրավունքի խախտում, կարող են իրենց խախտված իրավունքի պաշտպանության համար դիմել դատարան՝ հանդես գալով որպես դիմող** (Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետը սահմանում է, թե ով է դիմողը. **դիմող՝ յուրաքանչյուր անձ, որը դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքի պաշտպանության համար**): Ըստ այդմ, դիմողը, ղեկավարվելով Օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով, **կարող է վերաքննության կարգով բողոքարկել 376<sup>1</sup>-ին հոդվածի 1-ին մասի 3-6-րդ կետերով նախատեսված դատական ակտերը** (նշված հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են, ի թիվս այլնի, առաջին ատյանի դատարանների՝ **խուզարկության, առգրավման** մասին որոշումները.): Այսինքն, սրանով երաշխավորվում է անձի դատական պաշտպանության իրավունքը՝ հնարավորություն





տալով դատավարության մասնակից չհանդիսացող անձին ունենալ իրավունքի պաշտպանության արդյունավետ գործիքակազմ:

**1.2.5.** Անդրադառնալով միջազգային փորձին՝ պետք է նշել, որ բացառապես մեղադրյալի կամ կասկածյալի վերաբերյալ բանկային գաղտնիքը ստանալու հնարավորության մասին նշումներ չկան, ի թիվս այլ երկրների, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Վրաստանի, Լատվիայի, Էստոնիայի, Լեհաստանի, Հունաստանի, Կանադայի, Լյուքսեմբուրգի քրեական դատավարության օրենսգրքերում: Հարկ է նշել, որ Հյուսիսային Եվրոպայի, մասնավորապես Սկանդինավյան երկրների ներպետական օրենսդրության ուսումնասիրությունից հետևում է, որ տվյալ երկրներում առկա չէ բանկային տվյալների տրամադրման սուբյեկտային սահմանափակում:

Շվեդիայի բանկային և ֆինանսական գործունեությունը կարգավորող օրենքը նախատեսում է այդպիսի գործունեություն ծավալող կազմակերպությունների կողմից՝ հաճախորդների տվյալների գաղտնիության պահպանման պարտականությունը:<sup>26</sup> Մինչույն ժամանակ, նույն ակտը նախատեսում է ֆինանսական կազմակերպությունների պարտականությունը անմիջապես և էլեկտրոնային եղանակով բացահայտել իրենց հասանելի տվյալները նախաքննությունը վարող քննիչի կամ միջազգային փոխօգնության հարցերով դիմած դատախազի պահանջով:<sup>27</sup> Ընդ որում, համապատասխան պահանջով դիմած քննիչը կամ դատախազը կարող են կայացնել որոշում՝ որոշակի ժամանակով արգելելով տեղեկատվությունը տրամադրած հաստատությանը տեղեկատվության տրամադրման մասին հայտնել հաճախորդին կամ այլ երրորդ անձի:<sup>28</sup>

Նորվեգիայի ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը նախատեսում է վերջիններիս պարտականությունը չբացահայտել հաստատության հաճախորդների վերաբերյալ հավաքված ցանկացած

<sup>26</sup> (Lag (2004:297) om bank- och Finansieringsrörelse), Շվեդիայի՝ Բանկային և ֆինանսական գործունեության մասին օրենք (2004), Հոդված 10.

<sup>27</sup> Տես նույն տեղում, Հոդված 11.

<sup>28</sup> Տես նույն տեղում, Հոդված 12.



տեղեկատվություն և ապահովել, որ այդպիսի տեղեկատվությունը հասանելի չդառնա երրորդ անձանց:<sup>29</sup> Միևնույն ժամանակ, քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ այն անձինք, որոնք ֆինանսական հաստատությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության հիման վրա կրում են գաղտնիության պահպանման պարտականություն, պարտավոր են որպես վկա բացատրություններ ներկայացնել ոստիկանությանը այն հանգամանքների վերաբերյալ, որոնք պաշտպանվում են որպես գաղտնիք:<sup>30</sup> **Անհրաժեշտությամբ պայմանավորված՝ այդպիսի պարտականությունը կարող է ծագել նաև մինչև քրեական գործի հարուցումը:**<sup>31</sup>

Դանիայի օրենսդրությունը նախատեսում է, որ ֆինանսական հաստատությունների անձնակազմը չի կարող ապօրինի կերպով բացահայտել կամ օգտագործել կոնֆիդենցիալ տեղեկատվությունը, որը վերջինս ստացել է իր պարտականություններն իրականացնելիս:<sup>32</sup> Միևնույն ժամանակ, «ապօրինի» չի համարվում քրեական դատավարության կանոնների համաձայն բանկային գաղտնիքի տրամադրումը<sup>33</sup>, որն իրականացվում է առգրավման կանոնների կիրառմամբ:<sup>34</sup>

Իսլանդիայի օրենսդրությունը, նախատեսելով բանկային տվյալներ գաղտնիությունը, սահմանում է, որ դրանք ենթակա են բացահայտման օրենքով նախատեսված դեպքերում:<sup>35</sup> Քրեական դատավարության շրջանակներում այդպիսի

<sup>29</sup> Lov om finansforetak og finanskonsern (finansforetaksloven), Նորվեգիայի՝ Ֆինանսական գործունեության ակտ (2015թ ), Հոդված 9-6, 9-7, 16-1.

<sup>30</sup> Lov om rettergangsmåten i straffesaker (Straffeprosessloven), Նորվեգիայի՝ Քրեական դատավարության ակտ (1981թ ), Հոդված 230.

<sup>31</sup> Տես նույն տեղում.

<sup>32</sup> (Bekendtgørelse af lov om finansiel virksomhed), Դանիայի՝ Բանկային Ֆինանսական գործարարության մասին ակտ (2017թ ), Հոդված 117.

<sup>33</sup> 8 OECD, Denmark: Phase 2 Report on The Application Of The Convention On Combating Bribery Of Foreign Public Officials In International Business Transactions And The 1997 Recommendation On Combating Bribery In International Business Transactions, adopted by the Working Group on Bribery in International Business Transactions on 15 June 2006, para 168.

<sup>34</sup> (Retsplejeloven - Bekendtgørelse af lov om rettens pleje), Դանիայի՝ Դատական ադմինիստրացիայի մասին օրենք (2017թ ), Հոդված 801-807f.

<sup>35</sup> (Lög um fjármálafyrirtæki) Իսլանդիայի՝ ֆինանսական գործունեության մասին ակտ (2002), Հոդված 58.



տվյալները ստացվում են նյութերի առգրավման կարգով:<sup>36</sup> **Նյութերը բանկի կողմից տրամադրվում են վարույթն իրականացնող մարմնի միջնորդության առնչությամբ դատարանի կայացրած որոշման հիման վրա:**<sup>37</sup> **Ընդ որում, այդ հարցի քննության նիստը կարող է անցկացվել նաև առանց այն անձին ծանուցելու, ում վերաբերյալ տրամադրվում է բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը:**<sup>38</sup>

Ֆինլանդիայի՝ բանկային գործունեությունը կարգավորող օրենսդրությունը նախատեսում է բանկային տվյալների գաղտնիությունը:<sup>39</sup> Միևնույն ժամանակ, դատավարական օրենսդրությունը նախատեսում է, որ գրավոր ապացույցները կարող են նաև պահանջվել և ներկայացվել դատարան, անկախ դրանց՝ գաղտնի տեղեկատվություն պարունակելուց, եթե ապացույցը կարող է առանց ոչ ողջամիտ անհարմարության ուսումնասիրվել այնպես, որ այդպիսի տեղեկատվությունը չհրապարակվի:<sup>40</sup>

Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հասանելիության կապակցությամբ հստակ չափորոշիչներ առկա են նաև միջազգային հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը ներկայացվող պահանջներում, որոնք վերաբերում են թե՛ քննվող հանցագործություններին առնչվող սուբյեկտների շրջանակին և թե՛ այլ էական պայմաններին: Այսպես.

1) Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության առաջարկության մեջ հստակ նշված է, որ անհրաժեշտության դեպքում իրավապահ մարմինների համար ֆինանսական տվյալները պետք է մատչելի լինեն կոռուպցիոն հանցագործությունները բացահայտելու և քննելու նպատակով, ինչպես նաև հստակեցված է, որ **կասկածյալից ու մեղադրյալից բացի այլ անձանց, օրինակ՝**

<sup>36</sup> (Lög um meðferð sakamála), Քրեական դատավարության ակտ (2008), Հոդված 68-69

<sup>37</sup> Iceland – national procedures for mutual legal assistance on laundering, search, seizure and confiscation of proceeds of crime (ETS No. 141), Updated 19/05/2017, 3.

<sup>38</sup> Տես նույն տեղում:

<sup>39</sup> Act on Credit Institutions 8.8.2014/610, Unofficial translation. Amendments up to 1199/2014 included, May 2015, Chapter 15, Section 14.

<sup>40</sup> NB: Unofficial translation of Ministry of Justice, Finland Code of Judicial Procedure (4/1734; amendments up to 732/2015 included), Chapter 17, Section 38.



ընտանիքի անդամների կամ փոխկապակցված այլ անձանց ֆինանսական տվյալները կարող են մատչելի դարձվել, երբ առկա են բավարար կասկածներ, որ նրանք մասնակցել, օժանդակել են հանցանքի կատարմանը կամ տեղյակ են եղել կատարված հանցանքի մասին, կամ երբ հիմքեր կան կասկածելու, որ գումարը տրամադրվել է կասկածյալի կողմից առանց որևէ իրավական հիմնավորման.

2) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների կոմիտեի (MONEYVAL) զեկույցում ասված է, որ «կասկածյալ» կամ «մեղադրյալ» չհանդիսացող անձի վերաբերյալ բանկային գաղտնիք, արժեթղթերով կատարվող գործարքներին վերաբերող կամ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկատվությունը քննություն իրականացնող իրավասու մարմիններին պետք է հասանելի լինի փողերի լվացման, դրան նախորդող փոխկապակցված հանցանքների և ահաբեկչության ֆինանսավորման գործերով:

1.2.6. Նախագծերի փաթեթում առկա իրավակարգավորումներն անհրաժեշտ է դիտարկել նաև Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի լույսի ներքո: Մասնավորապես, նշված հոդվածի համաձայն՝

*«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:*

*2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:*

Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում մեկնաբանելով «անձնական կյանք» եզրույթը՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն լայն



հասկացություն է և ենթակա չէ սպառիչ սահմանման: Եվրոպական դատարանը գտել է, որ անձնական կյանքի ոլորտն ընդգրկում է մարդու առողջությունը, ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը: Անձնական կյանքի իրավունքը ներառում է նաև անհատական զարգացումը, այլոց և ընդհանրապես արտաքին աշխարհի հետ հարաբերություններ հաստատելը և զարգացնելը (տե՛ս NADA v. SWITZERLAND գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի սեպտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10593/08, կետ 151):

Վճռաբեկ դատարանը թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և դրա վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպասարկման կամ այլ գործառնությունների կապակցությամբ բանկի և անձի միջև հաստատված հարաբերությունները՝ որպես արտաքին աշխարհի հետ անձի հարաբերությունների փարատեսակ, հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված՝ մարդու անձնական կյանքի մաս: Հետևաբար, «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները՝ որպես մարդու անձնական կյանքի մաս, անձեռնմխելի են և դրանց սրացման վրա փարածվում են ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված սահմանափակումները» (տե՛ս Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԴ/0015/07/13 որոշումը, կետ 16):

Վերոնշյալ իրավական վերլուծությունների համատեքստում դիտարկելով



Նախագծում առկա իրավակարգավորումները՝ հարկ ենք համարում ընդգծել, որ բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության իրավական կանոնակարգումը Նախագծերի փաթեթում իրացվել է այն հաշվով, որ բացառվի դրա երաշխավորման պահանջից ցանկացած կամայական նահանջ՝ հիմք ընդունելով ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, իրավական և ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքները, տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը, ինչպես նաև մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

## **2. Առաջարկվող կարգավորման բնույթը և ակնկալվող արդյունքը**

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով քրեական վարույթին մասնակցելուց մեղադրյալի խուսափելու դեպքում առաջարկվում է նախատեսել խուսափող մեղադրյալի նկատմամբ հեռակա վարույթ իրականացնելու հնարավորություն:

Նախագծով առաջարկվում է Օրենսգրքում ավելացնել նոր բաժին և նոր գլուխ «**Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթը**» վերտառությամբ, և դրա ներքո կանոնակարգել հեռակա վարույթի առանձնահատկությունները, մասնավորապես, հեռակա վարույթի՝ որպես տարբերակված վարույթի՝ կիրառման հիմքը (քրեական վարույթին մասնակցելուց մեղադրյալի խուսափելը), հեռակա վարույթը բացառող հանգամանքները, հեռակա դատական քննություն իրականացնելու միջնորդությամբ հանդես եկող սուբյեկտի շրջանակը, միջնորդության ներկայացման և լուծման կարգը, հեռակա կարգով դատական քննություն իրականացնելու և դատավճիռ կայացնելու կարգը, հեռակա կարգով դատական քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման առանձնահատկությունները, ինչպես նաև հեռակա կարգով դատական քննության արդյունքում կայացված դատական ակտերի ի կատար ածման հարցերը: Նախագծով



առաջարկվում է նաև փոփոխություններ և լրացումներ կատարել Օրենսգրքի՝ նշված կարգավորումների հետ փոխկապակցված այլ հոդվածներում:

Նախագծով նախատեսվում է, որ հեռակա կարգով դատական քննություն կարող է կիրառվել դատարանի որոշմամբ մեղադրողի միջնորդության դեպքում, երբ մեղադրյալը (ամբաստնյալը) խուսափում է քննությունից: Որպես հեռակա վարույթի իրականացումը բացառող հանգամանքներ են նախատեսվել հետևյալ դեպքերը. ա) մեղադրյալը պատշաճ ծանուցված չէ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին կամ վարույթին մասնակցելն անհնարին է՝ իր կամքից անկախ հանգամանքներով, բ) չեն ձեռնարկվել անհրաժեշտ և բավարար միջոցներ գործի քննությանը մեղադրյալի մասնակցությունն ապահովելու համար, գ) մեղադրյալն անչափահաս է կամ դ) մեղադրյալն արարքը կատարելու պահին եղել է անմեղսունակ վիճակում, կամ հանցագործությունը կատարելուց հետո հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ այդ գործողությունները ղեկավարելու հնարավորությունից կամ առկա է մեղադրյալի՝ այդպիսի վիճակում լինելու վերաբերյալ ողջամիտ կասկած:

Նախագծով նախատեսվել է նաև հեռակա կարգով դատական քննության արդյունքում կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման և ի կատար ածման տարբերակված կարգ:

Միաժամանակ, ամփոփելով հիմնավորման 1.2 կետով ներկայացված դիտարկումները՝ հարկ է նշել, որ Նախագծով առաջարկվում է նաև բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալ հետևյալ սուբյեկտների մասով.

**1) կասկածյալի.**

**2) մեղադրյալի.**

**3) այն ֆիզիկական անձի, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նրա և 1-2-րդ կետերով նշված անձի միջև առկա է անմիջական կապ, և նրա վերաբերյալ այդ տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են 1-2-րդ կետերով նշված անձին վերագրվող արարքին.**



4) այն իրավաբանական անձի, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է 1-2-րդ կետերով նշված անձի կողմից, և դրա վերաբերյալ այդ տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են 1-2-րդ կետերով նշված անձին վերագրվող արարքին:

Քրեական գործերով վերոնշյալ անձանց վերաբերյալ բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանվածությունն ապահովելու համար Նախագծով առաջարկվում է սահմանել հետևյալ ամուր երաշխիքները՝

ա) Բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն ստանալու միջնորդության բավարարման դեպքում դատարանը **պետք է կայացնի պատճառաբանված որոշում.**

բ) **այն անձինք, որոնք չեն հանդիսանա դատավարության մասնակից, հնարավորություն են ունենալու ծանոթանալ իրենց վերաբերյալ հավաքված տեղեկություններին.**

գ) «բ.» կետով նախատեսված իրավունքի իրացման դեպքում դատավարության մասնակից չհանդիսացող անձինք, եթե գտնում են, որ տվյալների ձեռքբերման շրջանակներում տեղի է ունեցել իրենց իրավունքի խախտում, կարող են իրենց խախտված իրավունքի պաշտպանության համար դիմել դատարան՝ հանդես գալով որպես դիմող:

Ինչ վերաբերում է դատավարության մասնակից հանդիսացող անձանց, ապա հարկ է նկատի ունենալ, որ արդեն իսկ առկա ընթացակարգերի շրջանակներում նրանք ծանոթանում են գործով հավաքված նյութերին և կարող են բողոքարկման կառուցակարգերի շրջանակներում հասնել իրենց իրավունքի արդյունավետ պաշտպանությանը:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում կատարել համապատասխան փոփոխություն, որը





համահունչ կլինի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով առաջարկվող փոփոխությունների և լրացումների տրամաբանությանը:

Միաժամանակ, հարկ է փաստել, որ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

### 3. Նախագիծը մշակող մարմինը

Նախագծերի փաթեթը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

### 4. Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների պայմաններում Նախագծերի փաթեթով՝

1) մեղադրյալի կողմից քրեական վարույթին մասնակցելու իրավունքից հրաժարվելը և որպես հետևանք գործի քննությանը չմասնակցելը չի բացառի վարույթի հետագա ընթացքը՝ այդպես ապահովելով ողջամիտ ժամկետներում գործերի քննությունը, տուժողի արդարադատության մատչելիությունը, ինչպես նաև մասնավոր և դրան հակակշիռ հանրային շահի ողջամիտ հավասարակշռումը,

2) քրեական գործի շրջանակներում բանկային և հարակից գաղտնիք կազմող տեղեկությունների ստացման համար սահմանված սուբյեկտային սահմանափակումը օբյեկտիվորեն կվերանայվի՝ ապահովելով անհրաժեշտ հավասարակշռություն հանրային և մասնավոր շահերի միջև: Միաժամանակ չեն ստեղծվի անհամաչափ կամ անհաղթահարելի սահմանափակումներ հանցագործությունների կանխման,



Խափանման և դրանց բացահայտմանն ուղղված գործունեության ընթացքում: Դրան զուգահեռ, կնախատեսվեն անհրաժեշտ երաշխիքներ վերանայված սուբյեկտային կազմի իրավունքների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու համար:



## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ» ԵՎ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ առկա չէ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն: